

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդներն ու
տեխնոլոգիաները

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիաննա Ավագյան

Երևանի հ.98 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Սրբուհի Լուվուկյան

Երևան 2022

Բովանդակություն

1.Ներածություն	3
2.Օտար լեզուների դասավանդման առանձնահատկությունները	5
3. Գերմաներեն լեզվի դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները.....	12
4.Եզրակացություն	20
5.Օգտագործված գրականության ցանկ	21

1.Ներածություն

«Եթե, ըստ նախասահմանվածի, մեզ անհրաժեշտ լիներ ավելի շատ խոսել քան լսել, ապա մենք կունենայինք երկու լեզու և մեկ ականջ»:
Մարկ Տվեն

Թեմայի արդիականությունը: Լեզվի և հաղորդակցման նկատմամբ հետաքրքրությունը սկսել է ձևավորվել դեռևս հին ժամանակներում (Սոկրատի երկխոսություններում, Արիստոտելն առաջին անգամ առաջին անգամ քննարկել է հաղորդակցման խնդիրը և իր «Հռետորիկայում» փորձել մշակել դրա տեսությունը, ընդ որում ուշադրությունը կենտրոնացնելով համոզելու արվեստի վրա): Այս հասկացությունների մասին շատ է խոսվել և գրվել, հետևաբար դրանց սահմանումները բազմաթիվ են: Քննարկենք դրանցից առավել էականները:

Լեզվի մասին կան բազում մոտեցումներ: Այսպես, լեզուն տվյալ ժողովրդի բառերի ամբողջությունն է, ավելի ստույգ դրանց կապակցությունը՝ մտքերի արտահայտման համար: Լեզուն նշանների համակարգ է, որը ծառայում է իբրև հաղորդակցման միջոց անհատների միջև (ըստ Ժ. Մառուզոյի):

Լեզուն իմաստաբանական ինքնուրույն համակարգերից մեկն է, որը տվյալ մարդկային հասարակության անդամների հաղորդակցման հիմնական և կարևոր միջոցներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է նաև նրանց մտածողության զարգացման, սերնդեսերունդ մշակութային պատմական սովորույթների փոխանցման միջոց: Լեզուն մարդկային հասարակության մեջ տարարայնորեն առաջացած և զարգացած լեզվական նշանների համակարգ է, որը ծառայում է հաղորդակցման նպատակներին և կարող է արտահայտել արտաքին աշխարհի վերաբերյալ մարդու գիտելիքների ու պատկերացումների ամբողջությունը (Ն. Արուստյունովա):

Հայտնի է, որ մասնագիտական նպատակով օտար լեզվի ուսուցումը առավելապես կենտրոնացած է տեքստի բովանդակության, այլ ոչ թե բառային, հոմանիշային, քերականական և լեզվական այլ կողմերի վրա: Այս դեպքում անհրաժեշտ է մասնագիտական տեքստը մատուցել գերմաներենով և օտար լեզվի իմացությունը հասցնել այնպիսի մակարդակի, որ նրանք ի վիճակի լինեն կարդալ,

ընկալել և հեշտությամբ վերարտադրել մասնագիտական տեքստեր, գրույցներ վարել տվյալ ոլորտին վերաբերող թեմաներով: Այս դեպքում նրանք գերմաներեն են սովորում այն համատեքստում, որը նրանց հետաքրքիր է և հոգեհարազատ:

Ինչ նպատակով էլ ուսումնասիրվի օտար լեզուն, կարևոր է գիտակցել, որ դա աստիճանական բնույթ կրող գործընթաց է, որի շրջանակներում սխալներ կարելի է ակնկալել ուսուցման բոլոր մակարդակներում: Օտար լեզվի ուսուցման ընթացքում դասախոսի կամ ուսուցչի հիմնական խնդիրը պետք է լինի օգնել սովորողին հասկանալու իր սխալները, լուծումներ գտնել շտկելու դրանք, պարզել լեզվական այն հմտությունները, որոնք կնպաստեն օտար լեզվի ավելի դյուրին յուրացմանը, որոնց ներկայացումն էլ պայմանավորում է մեր կողմից ընտրված թեմայի կարևորությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ներկայացնել օտար լեզվի, մասնավորապես գերմաներենի, դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները: Աշխատանքի նպատակից ելնելով՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները
- Ուսումնասիրել օտար լեզվի, մասնավորապես գերմաներեն լեզվի, դասավանդման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

2.Օտար լեզուների դասավանդման առանձնահատկությունները

Լեզվի յուրացման լայն ճանաչում ստացած տեսություններից է Ն. Խոմսկու բնածին գիտելիքների գոյության մասին տեսությունը¹: Բնածին գիտելիքների գոյության փաստը արձանագրել են նաև այլ հեղինակներ: Բնածին են գործունեության այն հիմքերն ու կառույցները, որոնք գործի դնելու հետևանքով հնարավոր է օբյեկտիվ իրականության յուրացումն ու արտացոլումը: Լեզվի դասավանդման մեթոդները այսօր հայտնի տարբեր տեսություններից է դիսկուրսի տեսությունը²: Ըստ դիսկուրսի տեսությունը առաջադրողների՝ լեզուն յուրացվում է այն դեպքում, երբ յուրացնողն ունի քերականական և գործաբանական հմտություններ: Տեսության գաղափարախոսները գտնում են, որ լեզվի կառուցվածքն ընկալելի է նրա կիրառման ընթացքում, և լեզու յուրացնելու համար պարտադիր և հաղորդակցական գործելակերպի իմացությունը³:

Լեզվի յուրացման հայտնի տեսությունները քննելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև Ժ. Պիաժեի գենետիկ հոգեբանության տեսությանը: Մշակելով և գիտության մեջ ներմուծելով երեխայի խոսքի ուսումնասիրման կլինիկական դերը՝ Ժ. Պիաժեն ուսումնասիրում է նրա տրամաբանական մտածողությունը: Նախկինում կարծիք կար, թե երեխան գուրկ է վերացական մտածողությունից, հասկացություններ ձևավորելու և մտահանգումներ անելու կարողությունից:

Ժ. Պիաժեն, ուշադրությունը կենտրոնացնելով երեխայի ունակությունների վրա, փորձում է վեր հանել նրա մտածողության առանձնահատկությունները: Նա գտնում է, որ երեխան փոքրիկ մեծ մարդ չէ, և նրա գլխուղեղը մեծ մարդու փոքրիկ ուղեղը չէ: Ժ Պիաժեի գենետիկ հոգեբանության հայեցակարգում ինտելեկտն ու ընկալումը շրջապատող աշխարհին հարմարվելու երկու տարբեր ձևերն են⁴: Ընկալումը զգայական հիմք ունի:

«Լեզվի յուրացում» և «գործածում» հասկացությունները գործընթացներ են, իսկ յուրացրածն ու սովորածն, բնականաբար, արդյունքներ:

¹ Хомский Ноам , Язык и мышление, М. 2002, с. – 8.

² Хурматуллин А., Понятие дискурса в современной лингвистике, элек. ресурс, <https://cyberleninka.ru/article/v/ponyatie-diskursa-v-sovremennoy-lingvistike>

³Осипов Г., Взгляды и тенденции в современной теории дискурса, элек. ресурс, <https://cyberleninka.ru/article/n/vzglyady-i-tendentsii-v-sovremennoy-teorii-diskursa>

⁴ Пиаже Ж., Схемы действия и усвоение языка, Семиотика. - М., 1983, с. - 133-136.

«Լեզվի յուրացում» հասկացությունն իր մեջ ներառում է ն' լեզվական կարողությունը, ն' գործածումը՝ որպես միևնույն մակարդակի և միմյանց հետ համաձայնեցվող երևույթներ⁵:

Օտարալեզու բառերը հաճախ մտապահվում են մայրենի լեզվի բառերի նմանությամբ: Սա մի փաստ է, որ անմիջականորեն կապվում է լեզուների ծագումնաբանական ընդհանրությունների ու լեզվական փոխառությունների հետ: Բառերի գործառույթը նրանց նշանակությունն ու վերաբերությունն է: Փորձառու լեզուն յուրացնողները տարբերվում են բառիմաստների «ենթադրական իմացությամբ» ու ճանաչողական ստրատեգիաների կիրառմամբ: Լեզվի յուրացմանն անդրադարձող հեղինակների մի մասը պնդում է, որ չափահասները ավելի արագ են յուրացնում լեզուն, քան փոքրերը, մինչդեռ մյուսները կարծում են, որ հնչյունաբանական ու քերականական կառույցներն ավելի մատչելի են երեխաներին⁶:

Օտար լեզվի դասավանդման գործընթացում իրենց դերն ունեն անձնային այնպիսի հատկություններ, ինչպիսիքն են ունակությունը և մտավոր կարողությունը, մոտիվացիան, վերաբերմունքն ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ, ճանաչողական առանձնահատկությունները և բնավորության գծերը⁷:

Ա. Գ. Աստվածատրյանի, օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի պատմության մեջ «մեթոդ» հասկացությունը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով՝

ա / որպես մեթոդական համակարգ կամ մեթոդա կան ուղղություն /ընդհանուր իմաստով/ և

բ/ որպես ուսուցման եղանակներից մեկը /մասնավոր իմաստով/:

Առաջին դեպքում մենք խոսում ենք քերականականթարգմանական, ուղիղ, խառը, գիտակցականհամադրական և ինտենսիվ մեթոդների մասին: Երկրորդ դեպքում, ավելի մասնավոր իմաստով, «մեթոդ» տերմինի հասկացությունը հենվում է դիդակտիկայի տվյալների վրա⁸:

Մ.Գ.Ասվածատրյանը իր հետագա շարադրանքում, խոսելով մեթոդների և սկզբունքների մասին, ուղղակիորեն չի նշում «հաղորդակցական մոտեցում» եզրույթը: Մակայն նա մի ամբողջ բաժին է նվիրում «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքի» քննարկմանը: Մ.Գ.Աստվածատրյանի կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքը» ներառում է

⁵ Бударов Р. А. Введение в науку о языке. / 3-е изд. М.: Добросвет-2000, 2003, с. – 52.

⁶ Առաքելյան Ռ. – Հոգելեզվաբանություն, Երևան 2007, էջ 97:

⁷ Օտար լեզուների առարկայական ծրագիր, գլուխ XXIV. www.mes.gov.ge/uploads.gegmobi/4.doc

⁸ Աստվածատրյան Մ.Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., 1985, էջ12-21:

իր մեջ շատ «պահանջներ», որոնք բնորոշ են հաղորդակցական մոտեցումից բխող սկզբունքներին, նախ և առաջ բովանդակային առումով:

Կարևոր է նշել, որ «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքը» և «հաղորդակցական մոտեցում» եզրույթները ունեն ընդհանուր բովանդակային տարրեր և/կամ եզրեր առաջին իսկ հայացքից: Դրա հետմեկտեղ, այդ հասկացությունները ունեն թե ծագումնաբանական, թե մեթոդաբանական. թե բովանդակայինգործառական ակնառու տարբերություններ:

Առաջին տարբերությունը ոչ միայն տեսական է. այլև մեթոդաբանական: Բանն այն է, որ խորհրդային մեթոդական ավանդույթի շրջանակներում սկզբունքներն են նախորդում մեթոդներին, և դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկան դիտարկվում է խորհրդային ավանդույթի կողմից որպես մասնավոր մեթոդիկա, իսկ դիդակտիկան որպես ընդհանուր ուսուցման տեսություն կամ ընդհանուր մեթոդիկա: Դրանից հետևում է, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի սկզբունքները, և ոչ միայն սկզբունքները, այլև մեթոդները ածանցվում են դիդակտիկայի սկզբունքներից: Ինչպես գիտենք, այդ ավանդույթի շրջանակներում առաջադրվում է սկզբունքների հիերարխիկ, ստորակարգային համակարգ, որտեղ սկզբից գալիս են դաստիարակության և ուսուցման սկզբունքները, հետո միայն մասնավոր մեթոդիկաների սկզբունքները⁹:

Արևմտյան մեթոդական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդակցական մոտեցումը համարվում է մեթոդ, երբ խոսք վերաբերում է առանձին առարկաների դասավանդմանը կամ ուսումնառությանը և համարվում է նորագույն, ժամանակակից ավանդական և նոր մեթոդները համադրող, ընդհանրացնող մեթոդ: Այսինքն, մի դեպքում այն հանդես է գալիս մեթոդական մակարդակում, մյուս կողմից մեթոդաբանական:

Հաղորդակցական մոտեցումը ինչոր տեղ հաջող համադրումն է ոչ միայն տարբեր մեթոդներին համապատասխանող սկզբունքների, այլև տարբեր մանկավարժական, դիդակտիկական, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական հայեցակետերի, անհրաժեշտություն է առաջանում թվարկել արևմտյան գիտական հանրության կողմից ընդունված դասավանդման հետևյալ մեթոդներն ու սկզբունքները:

1. Հնարավորին չափ օգտագործել իսկական լեզուն, ինչպես որ այն իրական ենթատեքստում պիտի ներմուծվի, օրինակ, առաջարկվում է թարմ շաբաթաթերթեր բերել,

⁹ Rogova G.V. Methods of Teaching English. Изд-во «Просвещение», 1975.

որոնք պարունակում են սպորտին կամ մշակույթին վերաբերող պունակներ: Այսինքն՝ ուսուցանվող լեզուն պիտի լինի ժամանակակից:

2. Հաղորդակցական իրազեկության մի մասն է կազմում խոսողի կամ լսողի մտադրությունը պարզաբանելը: Օրինակ, աշակերտներն ընդգծում են լրագրողի ավելի որոշակի կամ անորոշ կանխագուշակումները:

3. Ուսուցանվող լեզուն ոչ թե ուսումնասիրության առարկա է, այլ հաղորդակցության շարժանիվ:

4. Մի գործառույթը կարող է ունենալ տարբեր լեզվական ձևեր:

5. Աշակերտները պիտի լեզվի հետ աշխատեն տեքստային (discourse) կամ նախադասությունից վեր մակարդակում: Նրանք պիտի սովորեն կապակցել և համաձայնեցնել նախադասությունները և համախմբող, հարակցող լեզվական ունակություններ ունենան: Օրինակ, աշակերտներն աղավաղում են լրագրային հոդվածը:

6. Խաղերը կարևոր են. որովհետև ունեն որոշակի ընդհանուր գծեր իրական հաղորդակցական իրադրությունների հետ: Դա հետապնդում է հաղորդակցական նպատակ: Ըստ այս սկզբունքի, սովորողը լեզվական խաղ է խաղում:

7. Աշակերտին պիտի հնարավորություն տրվի արտահայտել իր գաղափար ներս ու կարծիքները:

8. Կարևոր է ոչ թե խոսքի ճշտությունը, այլ սահունությունը, այսինքն սխալները հաղորդակցական տարբեր մակարդկաներում ներելի են: Հետաքրքիրն այն է, որ աշակերտի սխալը կարող են չնկատել ոչ միայն աշակերտները, այլև ուսուցիչը:

9. Ուսուցչի ամենակարևոր պատասխանատվությունն է ստեղծել հաղորդակցությանը նպաստող իրադրություններ: Օրինակ, հանձնարարվում է հորինել մի փոքրիկ պատմվածք կամ կատարել մի առաջադրանք:

10. Հաղորդակցությունը խրախուսում է համագործակցությանը: Դա հնարավորություն է ստեղծում, որ աշակերտներն աշխատեն «բանակցող նշանակության վրա» (negotiating).

Արտահայտություններն իմաստավորելիս կարևոր է հաղորդակցական իրադրության սոցիալական ենթատեքստը:

11. Հաղորդակցական իրազեկության կարևոր մասն է կազմում լեզվական ձևերը համապատասխանորեն օգտագործել սովորելը:

12. Հաղորդակցական գործունեության ժամանակ ուսուցիչը հանդես է գալիս որպես խորհրդատու:

13. Հաղորդակցվելիս, ուսուցիչը ընտրության առաջ է կանգնում ոչ միայն ինչ, այլև ինչպես ասել:

14. Ուսուցանվող քերականությունը և բառապաշարը ընտրվում է ըստ գործառույթի, իրադրական ենթատեքստի և խոսակիցների դերերի:

15. Աշակերտները պիտի յուրացնեն լեզուն ինչպես լեզվակիրներ: Օրինակ, տնային առաջադրանք է տրվում, որ աշակերտները լսեն ռադիոյով կամ այն դիտեն հեռուստացույցով:

Այսպիսով կարելի է պնդել, որ հաղորդակցական մոտեցումը ներկայացնում է նոր մեթոդաբանական մակարդակ: Համապատասխան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդակցական մոտեցումը ինչոր տեղ հաջող համադրումն է ոչ միայն տարբեր մեթոդներին համապատասխանող սկզբունքների, այլև տարբեր մանկավարժական, դիդակտիկական, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական հայեցակետերի: Սկզբունքային նշանակություն ունի այն փաստը, որ աշակերտները հնարավորին չափ պիտի օգտագործեն իսկական լեզուն, և ուսուցանվող լեզուն պիտի լինի ժամանակակից: Ընդ որում մի գործառույթը կարող է ունենալ տարբեր լեզվական ձևեր: Արտահայտություններն իմաստավորելիս կարևոր է հաղորդակցական իրադրության սոցիալական ենթատեքստը: Աշակերտները պիտի յուրացնեն լեզուն ինչպես լեզվակիրներ:

Հաղորդակցական իրազեկության մի մասն է կազմում խոսողի կամ լսողի մտադրությունը պարզաբանելը:

Այնուամենայնիվ, գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

Կառուցվածքային մոտեցում (լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ)

- Քերականաթարգմանչական մեթոդ: Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեռած լեզուներն ուսումնասիրելու համար:

- Լսողալեզվական մեթոդ: Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

- Պրոպրիոցիտիվ մեթոդ: Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:

Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառնությունների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

- Լեզվի իրավիճակային ուսուցում Բանավոր մոտեցում: Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում¹⁰:

- Ուղղորդված պրակտիկա /փորձառություն/: Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային/ բազային/ արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ինտերակտիվ մոտեցում, լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:

- Ուղղիչ մեթոդ: Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

- Հաջորդականության մեթոդ: Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով: Օր.՝ Ամեն առավոտ ես արթնանում եմ ժամը 7ին, լոգանք եմ ընդունում, հագնվում եմ, նախաճաշում եմ, սրճում եմ, գնում դպրոց, դասերից հետո ընկերներով հավաքվում ենք և այլն: Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով ավելի լավ յուրացման համար:

- Խոսակցական ուսուցում: Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ

¹⁰ Lightbown, P.and N. Spada. 2003. How Languages are Learned. NY, Oxford University Press.

վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:

- Ընկղմում լեզվի մեջ: Մեթոդն օգտագործվում է տարրական դպրոցում, առաջ քաշելով երկլեզվության (բիլինգվիզմ) տարբերակը՝ դպրոցական ծրագրով նախատեսված առարկաներն ուսուցանելով օտար լեզվով: Նույնիսկ մայրենի լեզվով ընթերցանությունը սկսում են օտար լեզվով կարդալու փուլն անցնելուց հետո:

- Լռության մեթոդ: Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

- Բնական մոտեցում: Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մատչելի յուրացման համար:

- Կարդալու և պատմելու մեթոդ: Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաձյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ: Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին օգտագործելով նյութի բառերը:

- Դոգմա մեթոդ: Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդողսովորող շփումը: Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք է լինեն¹¹:

- Պիմսլերի մեթոդը հիմնված է աուդիո ձայնագրությունների օգտագործման վրա: Վերջիններս աստիճանաբար բարդանում են, ամեն անգամ ներմուծելով ակտիվ նոր բառապաշար:

- Միշել Թոմասի մեթոդ: Այն իր մեջ ներառում է դասարանում արված մի շարք աուդիո ձայնագրություններ, որտեղ դասավանդողն աշխատում է երկու սովորողի հետ, բացատրում նրանց քերականական կանոնները, սովորեցնում բառագիտություն և հանձնարարություններ տալիս: Լսողը ինքնաբերաբար ներառվում է դասապրոցեսի մեջ՝ ստանալով խմբում աշխատելու տպավորություն:

¹¹ Brown, J. and T. Rodgers. 2004. Doing Second Language Research. Oxford, Oxford University Press.

3. Գերմաներեն լեզվի դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները

Գերմաներեն լեզվի յուրացման ու դասավանդման գործոններից է համարվում մոտիվացիան: Ընդհանուր առմամբ այն մարդկային որևէ գործողության դրդիչ ուժն է: Մոտիվացիայի բնույթն ու խնդրի բազմակողմանիությունը պայմանավորվում է այդ երևույթի ընկալման ու բացատրման տարբեր մոտեցումները¹²: Մոտիվացիան, ըստ էության մի քանի աղբյուրներ ունի: Ներքին մոտիվացիա կարող է լինել ինչոր նպատակ և հաջողության ընկալում, արտաքին կարող է համարվել քաջալերանքը, գովասանքը և ուսուցման ընթացքում կիրառվող նյութերն ու վարժանքները: Լեզվի դասավանդման ու դրա հաջող յուրացման վրա ազդող անձնային հատկանիշները են էքստրավերտությունն ու ինտրավերտությունը: Էքստրավերտությունը բնութագրվում է երկու հիմնական բաղադրիչներով՝ շփվելու ունակությամբ ու գործողության դիմելու հանկարծական մղումով: Օտար լեզվի դասավանդման գործընթացի վրա իրենց անմիջական ազդեցությունն են թողնում մի շարք լեզվական գործոններ, հայտնի է, որ հաղորդակցման իրադրության առումով տարբերակվում են լեզվական փոխահարաբերությունների երկու տեսակներ. բնական, որը ծագում է տարբեր լեզվակիրների գործունեության ընթացքում և արհեստական, որն առաջանում է կրթական համակարգի ներգործության արյունքում¹³: Լեզուների արհեստական շփումը որպես կանոն բնական շփումների հիմքն ու համապատասխան փուլն է:

Այսօր առավել կարևոր է խմբային ուսուցման մեթոդների կիրառումն գերմաներենի դասերին: Խմբային մեթոդների կիրառման նպատակն է.

1. Միապաղաղ և ձանձրալի դասերից խուսափում
2. Տարբեր կարողություններ ունեցող աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների առավելագույն ձեռք բերում
3. Յուրաքանչյուր աշակերտի արդյունավետ աշխատանքի ապահովում
4. Օտար լեզու ուսումնասիրելու հետաքրքրության և խթանման ստեղծում:

Խմբերի անդամների առավել օպտիմալ քանակն է համարվում 4 անդամ մեկ խմբում: Նման բաժանումը թույլ է տալիս խմբի ներսում գույգի առավել արդյունավետ աշխատանք

¹² Պետրոսյան Գ. Երկլեզվության հոգելեզվաբանական և հանրալեզվաբանական հայեցակարգեր, ԵՊՀ, 1998, էջ 83:

¹³ Flowerdew, J. and M. Lindsay. 2005. Second Language Listening: Theory and Practice. Cambridge, UK, Cambridge University Press.

կազմակերպել՝ այսինքն խմբի յուրաքանչյուր անդամ կարող է հաջորդաբար կազմել երեք զույգ: Խմբերը լինում են.

- Բազմասեռ խմբեր՝ մեկ անդամը՝ <<ուժեղ>> աշակերտ է, երկուսը՝ միջին կարողությունների տեր և մեկը՝

- <<թույլ >> աշակերտ

- Միասեռ խմբեր՝ միայն աղջիկներ կամ միայն տղաներ

- Հիմնական խմբեր՝ խմբեր, որոնք միասին աշխատելու են երկար ժամանակահատվածում

- Ինքնակամ խմբեր՝ հետաքրքրությունների կամ կենդանակերպի հիման վրա ստեղծված խմբեր:

Խմբային աշխատանք կազմակերպելու անհրաժեշտ սկզբունքները

- Ամեն աշակերտ պետք է գիտակցի, որ ամբողջ խմբի հաջող աշխատանքը կախված է խմբի յուրաքանչյուր անդամից

- Կատարված աշխատանքի արդյունքները պետք է ներկայացվեն խմբի յուրաքանչյուր անդամի կողմից

Խմբի ներսում հանձնարարությունը կատարելու ընթացքում աշխատանքը պետք է հավասարապես բաշխվի խմբի անդամների միջև.

- ✓ Հանձնարարությունը պետք է այնպես կազմել, որ խմբի յուրաքանչյուր անդամ ստանա հանձնարարության միայն որոշակի մի մաս

- ✓ Խմբի յուրաքանչյուր անդամ ունենա իր դերը

- ✓ Աշակերտները պետք է իմանան ինչ նպատակով են աշխատելու խմբում

- ✓ Որքան ժամանակ է տրվում հանձնարարությունը կատարելու համար

- ✓ Խմբի անդամների միջև պետք է լինի փոխադարձ հարգանք

- ✓ Խմբային աշխատանքը նպատակահարմար է կազմակերպել դասաժամի 25 % օգտագործելով:

Գերմաներենի դասավանդման մեկ այլ կարևոր մեթոդ է հնգյակների մեթոդը: Այս մեթոդով աշխատելիս պետք է դասարանը բաժանել զույգերի և յուրաքանչյուր զույգ տրված թեմայով պետք է գրի հնգյակը: Հնգյակ գրելու քայլերն են.

1. առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը՝ գոյական.

2. երկրորդ տողը ամբողջացնում է հասկացությունը բնութագրող երկու բառով՝ ածականներ

3. երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ՝ դերբայներ.

4. չորրորդ տողը ներկայացնում է չորս բառից կազմված մի արտահայտություն , որով հասկացության նկատմամբ դրսևորվում է զգացմունքը կամ վերաբերմունքը.

5. վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Գերմաներենի ուսուցման գործընթացը անխուսափելիորեն բախվում է օտար լեզուն սովորողի կողմից նրա նախկին լեզվական փորձի փոխանցման արդյունքում առաջացած սխալների ու նոր լեզվի լեզվական կառույցները յուրացնելու գործընթացում առաջացած խոչնդոտների հաղթահարման խնդրին: Դրանք առաջանում են լեզվական տարբեր բնագավառներում՝ քերականական, հնչյունաբանական, բառային (իմաստաբանական), ուղղագրական և այլն: Երկրորդ օտար լեզվի ակտիվ քերականական երևույթները ուսուցանելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջին օտար լեզվի և մայրենի լեզվի միջամտության և՛ դրական (տրանսպոզիցիա), և՛ բացասական (ինտերֆերենցիա) ազդեցությունները¹⁴: Այդ նպատակին է ծառայում տարբեր լեզուների համապատասխան երևույթների զուգադրումը, որը սովորաբար կատարվում է երեք մակարդակներում՝ ձևի, բովանդակության և գործառության¹⁵:

Գերմաներենի ու հայերենի համադրման պարագայում ամենահաճախ հանդիպող բացասական ազդեցությունը ի հայտ է գալիս նախադասության մեջ ստորոգյալի դիրքի հետ կապված: Գերմաներենում ստորոգյալի երկրորդ ամրագրված դիրքը նախադասության մեջ հաճախ է խախտվում հայերենի նախադասության ու բառակապակցությունների ազատ կառույցի ազդեցությամբ: Բայի հետ կապված փոխներթափանցման հաճախ հանդիպող դեպքեր են նաև ստորադասական նախադասությունները: Այս պարագայում հաճախ հայալեզու ուսանողները երկրորդական նախադասության ստորոգյալը օգտագործում են ազատ դիրքով՝ գերմաներենում ամրագրված վերջին դիրքի փոխարեն:

Օրինակ՝ Ինձ ասացին,որ նա գալու է երկու օրից:

Man hat mir gesagt, dass er in zwei Tagen kommt.

Գերմաներենում ենթակայի ու ստորոգյալի համաձայնության քերականական կատեգորիան յուրացնելիս սովորողները նույնպես կարող են բախվել գերմաներենի համապատասխան կատեգորիայի վրա մայրենի լեզվի ունեցած բացասական ազդեցությանը: Օրինակ՝ Եթե 2 ենթակաները մեկ միասնություն են կազմում, ապա

¹⁴ Hufeisen B., Neuner G.. Mehrsprachigkeitskonzept. Tertiärsprachenlernen. Deutsch nach Englisch. Strasbourg: Council of Europe Publishing, 2003, էջ 180:

¹⁵ Гак В.Г. Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка // Иностранные языки в школе, 1979, № , էջ 58:

ստորոգյալը գերմաներենում դրվում է եզակի թվով: Մինչդեռ հայերենում նման դեպքում ստորոգյալը հոգնակի է գործածվում:

Օրինակ. Alt und jung arbeitet im Feld.

Ահել ու ջահել աշխատում են դաշտում:

Ինտերֆերենցի խնդիրը կա նաև մեկից բարձր թվականի հետ գոյականի օգտագործման ժամանակ: Հայերենում այն դրվում է եզակի թվով, իսկ գերմաներենում՝ հոգնակի:

Օրինակ՝ Ես գնում եմ երեք խնձոր իմ աղջանի համար:

Ich kaufe drei Äpfel für meinen Sala.

Օրինակ՝ եթե սովորողը գիտի ռուսերենում գրենական պիտույքների սեռերը (ռուս. книга, тетрадь, ручкаիզական սեռ), ապա կարող է մեխանիկորեն սխալմամբ դրանք վերագրել գերմաներեն համապատասխան գոյականներին (das Buchչեզոք սեռ, das Heftչեզոք սեռ, der Kugelschreiber արական սեռ), ինչը հանգեցնում է քերականական սխալի: Այդ պատճառով անհրաժեշտ է գերմաներեն գոյականները սկզբից ի վեր ուսուցանել իրենց հատկանշական որոշիչ հոդերով ու գիտելիքների որոշակի մակարդակից սկսած ներկայացնել նաև սեռերի տարբերակմանը նպաստող կանոններ¹⁶:

Գերմաներենի ուսուցման ընթացքում լեզվական նյութի վրա աշխատանքը անհրաժեշտ է այնպես կազմակերպել, որ սովորողը քայլ առ քայլ հաղթահարելով նյութի հետ կապված տարբեր բնույթի դժվարությունները, կարողանա այն օգտագործել խոսքային գործունեության տարբեր տեսակներում: Քանի որ լեզուն ինֆորմացիա հաղորդելու և ընդունելու միջոց է, ուստի ուսուցման յուրաքանչյուր աստիճան և օղակ պետք է ուղղված լինի լեզուն կիրառելու ունակության ձևավորմանը: Գերմաներենի՝ իբրև լեզվական նյութի հետ աշխատանքի գլխավոր խնդիրն է դրա ներմուծումը՝ բացատրությունը, յուրացված լինելու մակարդակի ստուգումը և սովորողի մոտ մատուցված նյութի կիրառման նախնական ունակությունների ձևավորումը: Իսկ ինչպես հայտնի է լեզվաբանության մեջ ներմուծման կարևորագույն օղակներն են բացահայտումը, ձևը և օգտագործումը¹⁷:

Գերմաներենի դասավանդման գործընթացը սկսվում է դասավանդողի կողմից լեզվական նյութի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նրան ճիշտ ընտրելու ուսուցման եղանակները՝ անշուշտ

¹⁶ Բերբերյան Ն., Եղիազարյան Է. Գերմաներեն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2010, էջ 59:

¹⁷ Фоломкина С.К., Лившиц О.Я. Ознакомление учащихся с новым языковым материалом при обучении устной речи. Обучение устной речи и чтению. М., 1975, էջ 73:

հաշվի առնելով թիրախային խմբի լեզվական նախկին փորձն ու հմտությունները: Հաջորդ քայլը լեզվական նյութի նշանակության բացահայտումն է, որը իրագործվում է լեզվական /թարգմանական ու ոչ թարգմանական/ ու արտալեզվական /գործողության կամ առարկաների ցուցադրում, միմիկա/ եղանակներով: Հաջորդ քայլով դասավանդողը պետք է տարբեր եղանակներով ստուգի, թե որքանով է նոր նյութը յուրացվել սովորողների կողմից: Այս աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել նոր քերականական նյութի հետ մայրենի կամ առաջին օտար լեզվում հավանական առկա համընկնումներին:

Օտար լեզվի յուրացման գործընթացում իրենց դերն ունեն անձնային այնպիսի հատկություններ, ինչպիսիքն են ունակությունը և մտավոր կարողությունը, մոտիվացիան, վերաբերմունքն ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ, ճանաչողական առանձնահատկությունները և բնավորության գծերը: Օտար լեզուների դասավանդման մեթոդի պատմության տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի տվյալ ավանդույթների համեմատական վերլուծությունը՝ այս կամ այն սկզբունքն ու մեթոդը դիտարկելիս: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի ոչ միայն այն հանգամանքը, թե որ մեթոդաբանական կամ տեսական մոտեցումն է դրական կամ բացասական, արդիական կամ ոչ արդիական, այլ նաև այն, թե ինչպես օգտվել այդ պայմանականորեն բաժանված մեթոդական ավանդույթներից:

Օտար լեզվի դասավանդման գործընթացի վրա իրենց անմիջական ազդեցությունն են թողնում մի շարք լեզվական գործոններ, հայտնի է, որ հաղորդակցման իրադրության առումով տարբերակվում են լեզվական փոխահարաբերությունների երկու տեսակներ. բնական, որը ծագում է տարբեր լեզվակիրների գործունեության ընթացքում և արհեստական, որն առաջանում է կրթական համակարգի ներգործության արյունքում¹⁸: Լեզուների արհեստական շփումը որպես կանոն բնական շփումների հիմքն ու համապատասխան փուլն է:

Այսօր գերաներեն լեզվի դասավանդման ժամանակակից և նորագույն մեթոդիկա է համարվում նորարարական տեխնոլոգիաներով ուսուցումը: Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում գերմաներեն լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի տեսաբաններին:

¹⁸ Flowerdew, J. and M. Lindsay. 2005. Second Language Listening: Theory and Practice. Cambridge, UK, Cambridge University Press.

Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն:

Այսօր ակտիվ ուսուցման գործընթացում մեծ տեղ ունի քեյս մեթոդը: Այս մեթոդը հիմնականում շեշտը դնում է սովորողների ակտիվ մտածողություն վրա: Քեյս մեթոդը օտար լեզվի դասավանդման պրակտիկայում հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողների ստեղծագործական և քննադատական մտածողությունը՝ գործածելով դրանք խնդիրների լուծման ժամանակ, ինչպես նաև վերլուծելու սուացված արդյունքները, ցույց տալու դրանց կիրառելիությունը նմանատիպ այլ իրավիճակների համար, քանի որ ստեղծագործական, ճանաչողական և մասնագիտական գործունեության ժամանակ սովորողները միաժամանակ կիրառելու են իրենց մտավոր բոլոր հմտություններն ու կարողությունները:

Լեզվի դասավանդման գործընթացում քեյսմեթոդի կիրառումը կատարելագործում է սովորողների լեզվամտածողությունը: Լինելով ուսուցման ինտերակտիվ մեթոդ՝ այն սովորողների կողմից արժանանում է դրական վերաբերմունքի, քանի որ նրանք դրանում տեսնում են խաղ, որն ապահովում է տեսական գիտելիքների յուրացում և լեզվական գիտելիքների կիրառում: Իրավիճակների վերլուծությունն օտար լեզվով բավական ուժեղ է ազդում սովորողների մասնագիտացման վրա, նրանց մեջ ձևավորում է օտար լեզուն մասնագիտական խնդիրների լուծման համար կիրառելու հմտություններ :

Այս մեթոդի էությունը որոշակի իրավիճակների հետազոտման, կոնկրետ խնդիրների լուծման մեջ է: Քեյսը իրավիճակի նկարագրություն է, որն իր մեջ որևէ խնդիր է պարունակում: Սա կարելի է ասել՝ գործիք է, որի միջոցով իրական կյանքից մի հատված, իրավիճակ է ներկայացվում լսարանում, որը քննարկվում է և այդ քննարկման ընթացքում էլ ձեռք են բերվում որոշակի գիտելիքներ:

Որպեսզի բուհի շրջանավարտները հետագա աշխատանքային գործունեության ընթացքում իրենց վստահ զգան, հարկավոր է լսարանում էլ ստեղծել իրական, բնական խոսքային իրավիճակ, որը հատուկ է նույն մասնագիտությունն ունեցող լեզվակիրներին: Քեյս մեթոդը տվյալ դեւզում նպաստում է հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Ծանոթացումը քեյսի հետ՝ նյութի ընթերցանությունը, թարգմանությունը, ինքնուրույն խնդրի լուծման ուղիների որոնումը, իրավիճակի վերլուծությունը, ներքին մենախոսությունը նյութի շուրջ, խնդրի լուծման ձևակերպումն օտար լեզվով, այս ամենը հաղորդակցական խնդիրների օրինակներ են: Լսարանային աշխատանքը քեյսի շուրջ, որը իր մեջ ներառում է քննարկում, վեճ. փաստարկում, նկարագրում, համեմատում և այլ

խոսքային փուլեր, սովորողի մեջ վարժեցնում է խոսքային ճիշտ կողմնորոշում, ձևավորում է օտար լեզվով ճիշտ մտածողություն:

Քեյսը բարդ երևույթ է: Յուրաքանչյուր քեյս իր մեջ պիտի ունենա հետևյալ հույեցակետերը՝ սվիճարկելիություն, հսկամարտություն, դերախուսդային. ժամանակային, տարածական: ովորողի խնդիրն է՝ հետազոտության արդյունքում մշակել գործունեության ռազմավարությունը, խնդրի լուծման հնարավոր տարբերակները, ներկայացնել դրանք, քննարկել համակուրսեցիների ներկայացրած այլընտրանքային լուծումների արդյունավետությունը:

Այսօր գերմաներեն լեզի ուսուցման գործընթացում մեծ տեղ է զբաղեցնում նաև տեղեկատվության հետ աշխատանքը: Սովորողի համար ավելի կարևոր է դառնում կարողանալ ինքնուրույն ձեռք բերել լրացուցիչ նյութեր, վերլուծել ստացված տեղեկատվությունը, կարողանալ եզրակացություններ անել, կարծիք հաղորդել կարդացածի վերաբերյալ, հիմնավորել սեփական տեսակետները տիրապետելով անհրաժեշտ փաստերի՝ լուծել առաջացած խնդիրները: Օտար լեզվով տեղեկատվության հետ աշխատանքը, հատկապես, եթե հաշվի առնենք այն հնարավորությունները, որոնք մեզ է առաջ՝ արկում համացանցը, դառնում է բավականին հրատապ:

Համակարգչին արդյունավետ և հարմար օգնական է օտար լեզուների ուսուցման ժամանակ, քանի որ լեզու սովորելիս ինտերակտիվ շփման առկայությունը լզարտադիր պայման է: Հատկապես վերջերս համակարգչի օգնությամբ օտար լեզուների ուսուցումը լայն տարածում է գտել: Համակարգչային ուսուցումն ունի հսկայական խթանիչ՝ մոտիվացիոն ներուժ: Համակարգիչն լսալսողություն է ուսուցման ինտերակտիվության ավելի բարձր մակարդակ, քան աշխատանքը լսարանում կամ լեզվաբանական սենյակում:

Համակարգիչը կարող է օգտագործվել ուսուցման բոլոր փուլերում՝ նոր նյութը բացատրելու, ամրապնդելու ժամանակ, ինչպես նաև աշխատանքի վերահսկման ժամանակ:

Համակարգչի միջոցով օտար լեզվի ուսուցման տեխնիկական հնարավորությունները շատ լայն են: Վերջին մի քանի տարիների ընթացքում փորձեր կատարվեցին ստեղծելու ծրագրեր, որոնք հաջողությամբ կհաղթահարեին մեքենայական թարգմանությունը: Պետք է նշել, որ այժմ գոյություն ունեն մի քանի ծրագրեր, որոնք բավական հստակ կատարում են տեխնիկական թարգմանություններ: Սակայն գեղարվեստական տեքստերի թարգմանությունը դեռևս իր մեջ ունի բազմաթիվ դժվարություններ: Սակայն հենց նույն սկզբունքով ստեղծվել են քերականության և ուղղագրության ստուգման ծրագրեր: Ինչ վերաբերում է բանավոր խոսքի ուսուցմանը, որը երկար ժամանակ մնում էր օտար

լեզուների համակարգչային ուսուցման թույլ տեղը, ապա այդ բնագավառում կտրուկ շարժ նկատվեց մուլտիմեդիայի մշակումից հետո՝ սարքավորումների մի ամբողջ շարք, որոնք նկատելիորեն ընդլայնում է համակարգչի հնարավորությունները:

Համակարգչային որոշ ծրագրեր նույնիսկ թույլ են տալիս օգտագործողին ձայնագրել սեփական խոսքը, իսկ այնուհետև լսել այն և համեմատել լեզվակիրների արտասանաթ յան հետ կամ մոնիտորի վրա տեսնել սեփական ձայնագրության դիագրաման:

Համակարգչային տեխնոլոգիայի ևս մեկ խոստումնալից նորարարություն է ինտերակտիվ տեսագրությունը: Ծրագիրն իրենից ներկայացնում է ֆիլմ գերմաներեն լեզվով: Սովորողն արձագանքում է այն իրավիճակներին, որոնք առաջարկում է համակարգիչը (պատասխանում է ֆիլմի հերոսների հարցերին, դեկավարում է նրանց գործողությունները), և այս կերպ փոխում է սցենարը և ինքն է մասնակցում իրևարձությունների զարգացմանը:

Համակարգչային ուսուցման հիմնական թերությունը դեռևս մնում է բանավոր ուղիղ երկխոսության անհնարինությունը համակարգչի հետ: Սակայն տեխնիկական առաջընթացն այս բնագավառում հնարավորություն է տալիս վստահ հույս հայտնելու, որ խոսքի ճանաչման ծրագրերը մոտակա ժամանակներում կդառնան օտար լեզուներ սովորեցնող ծրագրերի անբաժանելի մասը:

Ի դեպ, ինչպես ցույց է տալիս մանկավարժների փորձը, ովքեր օգտագործում են այսպիսի համակարգչային ծրագրեր, դրանց պետք է տրվի 1)սահմանափակ տեղ համակարգիչի չի կարող փոխարինել անհրաժեշտ մարդկային շփմանը, ինչը սահմանափակում է լեզվի լիարժեք տիրապետման համար և 2)անպայման վերահսկողություն սահմանել առաջադրանքների Լոարտադիր կատարման նկատմամբ:

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների գործածումը հնարավոր դարձրեց նաև օտար լեզուների հեռավար ուսուցումը: Հեռավար ուսուցումը չի հանդիսանում ժամանակակից կրթական ոլորտի նորագույն ձեռքբերում: Դեռ կաբելային և արբանյակային հեռուստատեսության առաջացումը ուսուցման այս ձևի կիրառման լայն հնարավորություններ ստեղծեց: Այն ներկայումս արդեն համարվում է ավանդական և լայն կիրառություն ունի:

4. Եզրակացություն

Այսպիսով, լեզուն, մարդկային հաղորդակցության կարևորագույն միջոցը, մտածողության նյութական ձևը, որը ընդհանուր է տվյալ լեզվակիր հասարակության բոլոր անդամների և միասնական այդ լեզվով խոսող ամբողջ հասարակության համար: Լեզվի իրացումը խոսքն է՝ իր բանավոր և գրավոր տարբերակներով: Գերմաներեն լեզվի ուսուցման գլխավոր նպատակը սովորողի հաղորդակցության մշակույթի ձևավորումն է, օտար լեզվի գործնական (պրակտիկ) տիրապետումը: Գերմաներեն լեզվի յուրացման գործընթացում կարևորելով սխալների ուղղման տարբերակի ընտրությունը՝ գրեթե բոլոր ուսուցիչներն առանձնացնում են ընկերների կողմից դրանց ուղղումը: Գերմաներեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝ առանց կենտրոնանալու քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա:

Այսպիսով, վերջին մի քանի տարիների ընթացքում համակարգչային տեխնոլոգիաների նշանակությունն առօրյա կյանքում նկատելիորեն աճել է, և դրանց հասանելիությունն այնքան է հեշտացել, որ գործնականում ամեն ոք, տանից դուրս չգալով, հնարավորություն ունի օգտվելու հսկայական տեղեկատվական ռեսուրսներից: Ըստ այդմ՝ էլ, ժամանակին համընթաց, լիոխվում են նաև դասավանդման մեթոդները՝ փորձելով սովորողներին զինել այնպիսի գիտելիքներով, որոնք ճանապարհի կհարթեն դեպի նրանց մասնագիտական առաջընթացը:

5. Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Ռ. Հոգելեզվաբանություն, Երևան 2007.
2. Աստվածատրյան Մ.Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., 1985.
3. Բերբերյան Ն., Եղիազարյան Է. Գերմաներեն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2010.
4. Պետրոսյան Գ. Երկլեզվության հոգելեզվաբանական և հանրալեզվաբանական հայեցակարգեր, ԵՊՀ, 1998.
5. Օտար լեզուների առարկայական ծրագիր, գրուի XXIV. [www.mes.gov.ge/uploads. gegmob/4.doc](http://www.mes.gov.ge/uploads/gegmob/4.doc)
6. Будагов Р. А. Введение в науку о языке. / 3е изд. М.: Добросвет2000, 2003.
7. Гак В.Г. Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка // Иностранные языки в школе, 1979.
8. Осипов Г., Взгляды и тенденции в современной теории дискурса, элек. ресурс, <https://cyberleninka.ru/article/n/vzglyadyitendentsiivsovremennoyeteoriidiskursa>
9. Пиаже Ж., Схемы действия и усвоение языка, Семиотика. М., 1983.
10. Фоломкина С.К., Лившиц О.Я. Ознакомление учащихся с новым языковым материалом при обучении устной речи. Обучение устной речи и чтению. М., 1975.
11. Хомский Ноам , Язык и мышление, М. 2002.
12. Хурматуллин А., Понятие дискурса в современной лингвистике, элек. ресурс, <https://cyberleninka.ru/article/v/ponyatiediskursavsovremennoyelingvistike>
13. Brown, J. and T. Rodgers. 2004. Doing Second Language Research. Oxford, Oxford University Press.
14. Flowerdew, J. and M. Lindsay. 2005. Second Language Listening: Theory and Practice. Cambridge, UK, Cambridge University Press.
15. Flowerdew, J. and M. Lindsay. 2005. Second Language Listening: Theory and Practice. Cambridge, UK, Cambridge University Press.
16. Hufeisen B., Neuner G.. Mehrsprachigkeitskonzept. Tertiärsprachenlernen. Deutsch nach Englisch. Strasbourg: Council of Europe Publishing, 2003.

17. Lightbown, P. and N. Spada. 2003. How Languages are Learned. NY, Oxford University Press.
18. Rogova G.V. Methods of Teaching English. Издво «Просвещение», 1975.